Գնահատական այս ակնարկութիւնները երբեք շուքի մէջ չեն ձգեր դերը Շինութեան Յանձնախումբին, բաղկացած 25 հոգիներէ, երիտասարդ եւ չափահաս տարրերէ, որոնք գործը գլխաւորած եւ տնտեսած եւ իր լրումին բերած են։

Եկեղեցին խաչաձեւ է եւ գմբէթը գետնէն 60 ոտք բարձր է։ Գիշերները գմբէթը եւ վրայի խաչը լուսաւորուած են ուժ լուսարձակներով որոնք կը գործեն «օթոմաթիկ» կերպով։ Եկեղեցիի բոլոր պատուհանները գունաւոր ապակեպատկերներ ունին որոնք կը ներկայացնեն, բացի Յարութեան եւ Ծննդեան մեծ պատկերներէն, հայեցի սուրբեր, Ս. Վարդան եւ Տրդատ թագաւոր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Նարեկացի, Ս. Սահակ եւ Մեսրոպ, Ս. Սանդուխտ եւ Ս. Հռիփսիմէ։ Աւագ դրան երկու կողմերու պատուհաններու վրայ կան Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի պատկերները։ Իսկ ճակատի կեդրոնական պատուհանին մէջ՝ Գառն Աստուծոյ։ Ասոնք Եկեղեցին յոյժ կը գեղեցկացնեն եւ միստիկ լոյսերով կ'ողողեն ներսը։ Եկեղեցիին կաթողիկէն ոսկեգոյն ներկուած է, իսկ տանիքը՝ արծաթագոյն։

Եկեղեցիի նստարանները կաղնիի փայտէ շինուած են, իսկ յատակը տեղական գորգով ծածկուած է պատէպատ։ Գմբէթէն կախուած է շատ գեղեցիկ բիւրեղեայ խաչ ջահ մը։ Կան նաեւ ուրիշ եօթ բիւրեղեայ ջահեր։ Խորանին վերեւ կամարի ճակատին վրայ գրուած է հայերէն եւ անգլերէն. «Ես եմ հացն կենաց»։ Դասի վանդակը գեղեցկօրէն գործուած երկաթէ է։ Խորանին ներքնայարկին մէջ է եկեղեցիին ջեռուցիչ հնոցը։ Եկեղեցիին երկայնքն է 93 ոտք, լայնքը՝ 46½ ոտք։ Կ'առնէ շուրջ 300 հոգի։ Ծախսուած է շուրջ 145 հազար տոլար։

Փոքրիկ այս գաղութը կը ծրագրէ յառաջիկային շինել նաեւ իր հասարակական սրահը Եկեղեցիի կողքին։ Իսկ կիրակնօրեայ դպրոցի համար առայժմ կը կիրարկուին եկեղեցւոյ գաւիթին վրայի վերնատան երկու սենեակները, որոնց դէպի եկեղեցի նայող կողմն ալ պատուած է, ինչպէս նաեւ գաւիթի հարաւային կողմի սենեակը։

Եկեղեցւոյ օծման մասնակցած են Գալիֆորնիոյ թեմին բոլոր քահանաները, եւ պաշտօնական ներկայացուցիչներ ղրկած են բոլոր Եկեղեցիներու Հոգաբարձութիւնները։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յորդանանի անկախութեան 11րդ տարեդարձին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը ղրկած էր Ն. Վ. Թագաւորին: Հետեւեալ հեռագիրը պատասխանն է յիշեալ շնորհաւորութեան:

Արքունի Պալատ, Ամման, 11 Յունիս 1957

Պատրիարք Հայոց, Երուսաղէմ

Անկախութեան առիթով Ձեր շնորհաւորութիւններուն համար շնորհակալութիւն կը յայտնեմ: Թող Աստուած օգնէ մեզի, ձեռք բերելու համար այն՝ ինչ որ օգտակար է մեր սիրեցեալ Յորդանանին եւ Արաբներուն:

ԷԼ-ՀԻՒՍԷՅՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

● Շբ. 1 Յունիս. — Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան։

— Բ. Ծաղկազարդի նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Կիր. 2 Յունիս. — Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Կրճիկեան։ Քարոզեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, բնաբան ունենալով «Ովսաննա, օրհնեալ որ գայ յանուն Տեառն» (Յովհ. ԺԲ. 13), խօսելով նաեւ օրուան տօնին հետ աղերս ունեցող Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ հրեշտակի աւանդութեան մասին։

● Շբ. 8 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան։

— Հոգեգալստեան նախատօնակը հանդիսաւորապէս պաշտուեցաւ ի Ս. Յակոբ։ Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Իրիկնադէմին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ընկալեալ»ի եւ Հոկման արարողութիւններուն։

● Կիր. 9 Յունիս. — ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատոյց Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան։ Ս. Պատարագի ընթացքին կարդացուեցաւ Ոսկեբերանի Հոգեգալստեան ճառին աշխարհաբար թարգմանութիւնը, որմէ ետք Գեր. Պատարագիչ Սրբազանը քարոզեց օրուան տօնին մասին, ու ծանրացաւ «զհոգին մի՛ շիջուցանէք» առաքելական պատգամին վրայ, յորդորելով ներկաները

digitised by A.R.A.R.@

որ շարունակ հսկեն ու հոգ տանին որ չշիջանի իրենց ներքին վառող Ս. Հոգիին լույսը։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ, երեկոյեան ժամերգութիւնէն առաջ կատարուեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետն էր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը։

● Շբ. 15 Յունիս. — Է. or Հոգեզալստեան։ Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տաճարը՝ Ս. Հոգւոյ մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան։

● Կիր. 16 Յունիս. — Ցիշատակ Ս. Եղիայի մարգարէին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Յովսէփ Արդ. Մանուկեան։ Քարոզեց Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան. Նիւթ ունենալով եղիա մարգարէի կեանքը ու շեշտեց անոր մէջ նախանձայուզութեան ոգին՝ որ պէտք է երեան գայ նաև իւրաքանչիւր քրիստոնեայի կեանքին մէջ, ծառանալու համար չարին ու անոր սադրանքներուն դէմ։

— Կէսօրէ վերջ, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Ս. Հռիփսիմեանց նախատօնակը։ Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

● Բշ. 17 Յունիս. — Ս. Կուսանացն Հռիփսիմեանց։ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան։

● Ուր. 21 Յունիս. — Վարդաւան նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, Ամեն. Ս. Պատրիարք Հայր նախագահութեամբ։

● Շբ. 22 Յունիս. — Ս. Դր. Լուսաւորչին ելն ի վիրապէն տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

— Վարդաւան նախատօնակը հանդիսաւորապէս պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հայր։ Ըստ սովորութեան, նախատօնակէն հաք երգուեցաւ «Տէր զորմեաց»։ Ապա կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւնը՝ Ս. Աթոռոյս Ընծայարանի ուսանողներէն Բար. Գրիգոր Սրկ. Սահակեանի, Արմենակ Սրկ. Շիրվանեանի, Վարուժան Սրկ. Աբէլեանի և Կարապետ Սրկ. Գարպագեանի։

● Կիր. 23 Յունիս. — Տօն Կարուզիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց հանդիսաւոր Ս. Պատարագ և կուսակրօն քահանայ ձեռնադրեց յիշեալ չորս Սարկաւագները։ Իրեն կը սպասարկէին Հոգ. Տ. Տ. Զաւէն և Կիւրեղ Վարդապետները։ Խարտաւիլակի պաշտօնը կը կատարէր Լուսաւորչապետ Գեր. Տ. Շնորհք Եպս., իրեն առընթերակայ ունենալով Հոգ. Տ. Աստղիկ Ծ. Վրդ.ը և Հոգ. Տ. Յակոբ Վրդ.ը։ Օծման նուիրական պահուն, Գրիգոր Սրկ. վերակոչուեցաւ Տ. Գարիբ, Արմենակ Սրկ.՝ Տ. Արիս, Վարուժան Սրկ.՝ Տ. Լեւոն, իսկ Կարապետ Սրկ.՝ Տ. Յովնան քահանայ։ (Զեռնադրութեան արարողութեանց նկարագրականն ու այլ մանրամասնութիւններ, ինչպէս նաեւ Նորընծաներուն կենսագրական գիծերը պիտի տրուին «Սիոն»ի յառաջիկայ թիւով)։ Օծումէն ետք, Ս. Պատրիարքը քարոզեց, անդրադառնալով օրուան տօնին, իր խօսքը ուղղելով նորընծայ աբեղաներուն։ Իսկ «Հայր մերոյ»էն առաջ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք վասն Ս. Էջմիածնի։ Գեր. Տ. Սուքէն Եպս. Քէմհաճեանի նախագահութեամբ։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայր նախագահութեամբ կատարուեցաւ «Անդաստան»։ Իսկ երեկոյեան ժամերգութիւնէն ետք կատարուեցաւ նորընծաներուն վեղարի տուչութեան կարգը։ Ապա նորընծաները առաջնորդուեցան Ս. Յարութեան Տաճար, ուր պիտի անցնեն իրենց ապաշխարութեան օրերը, ուսանելով Ս. Պատարագի կարգերը։ Այս չրջանին իրենց ուսուցիչն ու վարժիչն է Հոգ. Տ. Աստղիկ Ծ. Վրդ. Ղազարեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

● Եշ. 30 Մայիս. — Քաղաքիս Երուսաղէմայի Հայոց Բարեխիրական Միութիւնը, Երուսաղէմի և Քեբրոնի Զինուորական Կառավարիչ ձեռամբ Գէյ Թուքանի, ինչպէս նաև այլ կառավարական պաշտօնեաներու իսպառիս Բօfբէլ Բարքի մը տուած էր, երեկոյեան ժամը 8ին, Միութեան սրահին մէջ։ Սոյն հաւաքոյթին ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր հետ ունենալով Գեր. Լուսարարապետ Սրբազանը, Գեր. Տ. Սուքէն Եպս.ը և Հոգ. Աւագ-Թարգման Հայրերը։ Ներկայ էին նաև Երուսաղէմ քաղաքի և Ս. Տեղեաց Կառավարիչ Առնան Գէյ Հիւսէյնի իր փոխանորդով, Լիթֆի Մուղրապի և Երուսաղէմի Քաղաքապետը, Երեսփոխաններ, Ոստիկանապետը և այլն, ինչպէս նաև հայ համայնքէն ծանօթ ազգայիններ։

● Կիր. 2 Յունիս. — Իրիկուան ժամը 6ին, Իսայիոյ ազգային տօնին առթիւ, Գեր. Տ. Սուքէն Եպս. Քէմհաճեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի և Տիար Կարապետ Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Իսայական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան։

● Դշ. 5 և Եշ. 6 Յունիսին Միաբանական Ընդհ. ժողովներ գումարուեցան, ուր քննարկուեցան և ընդունուեցան Տնօրէն ժողովոյ տարեկան հաշուետուութիւնները և վաւերացուեցաւ յառաջիկայ տարուան վանական պիւտճէն։ Ժողովի վերջին նիստին մէջ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան ընտրուեցաւ անդամ Տնօրէն ժողովոյ։

digitised by A.R.A.R.@

● Եշ. 6 Յունիս. — Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, հետն ունենալով Ամմանի Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Վազգէն Արդ. Գըլըըլեանը, Արքունիք ներկայացաւ, Վեհափառ Թագաւորին յանձնելու երկու հանրագրութիւններ, մին շուրջ 700 չափահաս այր մարդոց ստորագրութիւններով, իսկ միւսը Միաբանութեան անդամներու կողմէ, որոնք կը հերքէին այն ազգադաւ յերիւրանքները՝ զորս կարգ մը ազգային զգացումէ պարպուած անձեր տուած էին Վեհափառ Թագաւորին և հրատարակած էին տեղական թերթերու մէջ։

● Շբ. 8 Յունիս. — Կէսօրէ վերջ, տեղւոյս Սէնթ Ճորճ դպրոցի տարեկան մրցանահանդէսին ներկայ եղաւ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, իր հետ ունենալով Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեանը։

● Բշ. 10 Յունիս. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Տնօրէն ժողովի անդամներ Յորդանան գետ գացին վերանկատառութեան ենթարկելու այն հողը՝ որ ժամանակին կտակաւորութենէն տրամադրուած էր մեր Պատրիարքարանին և որ տեղի անյարմարութեան պատճառով և անհոգութեամբ ցարդ վրան մատուռ չէր կառուցուած։

● Եշ. 13 Յունիս. — Կէսօրէ վերջ, Ն. Վ. Էլիզաբէթ Բ. Թագուհիի ծննդեան տարեդարձի առթիւ, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետ ունենալով Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հայկասեր Վրդ.ը և Տիար Կարպիս Հինդլեան։

● Ուր. 14 Յունիս. — Կէսօրէ վերջ, Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան մեկնեցաւ Ամերիկա՝ իր պաշտօնատեղին։

● Բշ. 17 Յունիս. — Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Եպս., Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. և Տիար Կարպիս Հինդլեան Կառավարչատան մէջ ներկայ եղան յարանուանութեանց ներկայացուցչական ժողովի մը՝ ուր որոշուեցաւ քրիստոնէից յատկացուելիք նոր գերեզմանատան վայրը՝ քաղաքէն 6-7 քիլոմէթր հեռու, Ռամալլայի ճամբուն վրայ։

● Գշ. 18 Յունիս. — Կէսօրէ առաջ, Ս. Աթոռոյս Դիւանապետ Հոգ. Տ. Տիրայր Վրդ. Տէրվիշեան վերադարձաւ իր պաշտօնատեղին՝ Լոս-Անճէլըս։

— Նոյն երեկոյ, Ս. Աթոռ վերադարձաւ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, որ ամիսէ մը ի վեր կը գտնուէր Սուրիա-Լիբանան, Ժառ. վարժարանի յառաջիկայ դպրոցական տարեշրջանին համար աշակերտներ արձանագրելու պաշտօնով։

● Բշ. 24 Յունիս. — Առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. վարժարանի և Ընծայարանի ամավերջի քննութեանց։ Իսկ Ս. Թարգմանչաց վարժարանի քննութեանց բացումը կատարուեցաւ Դշ. 26 Յունիսի առաւօտուն։

ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ամէն տարի Յունիս և Յուլիս ամիսներու ընթացքին տեղի կ'ունենան Ս. Աթոռոյս վարժարաններուն ամավերջի քննութիւնները, դաշտահանդէսը, պազարը և աւարտական դասարաններու վկայականներու բաշխման հանդէսը։

Այս տարի ևս Շաբաթ 1 և Կիրակի 2 Յունիսին տեղի ունեցաւ Ս. Թ. Վարժարանիս տարեկան պազարը։ Շաբաթ յետ միջօրէին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան այցելելով վարժարան, բացաւ պազարի օրը, վարժարանի մուտքի դրան առջև դրուած ժապաւէնը կտրելով։

Վարժարանը զարդարուած էր շքեղօրէն։ Սրահին մէջ ցուցադրութեան դրուած էր ուսանողուհիներու ձեռագործ աշխատանքները և այլ վաճառելի առարկաներ։

Շաբաթ և Կիրակի օրերը յաջորդաբար աշակերտներու ծնողներն ու այլ հիւրեր այցելեցին վարժարանս և բոլորն ալ իրենց գոհունակութիւնը յայտնեցին, գնումներ ըրին և պատրաստուած կերակուրներու մասնակցեցան։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ու Միաբանութիւնն ալ վարժարանին զանազան մասերը այցելելէ ետք, զովացուցիչներով հիւրասիրուեցան և իրենց գնահատական խօսքը ըրին Հոգ. Տեսուչ Տ. Կիւրեղ Վրդ.ին և վարժարանի ուսուցչական կազմին, որոնք մասնաւոր աշխատանք տարած էին ամէն կերպով յաջող դարձնելու համար սոյն պազարը։

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիրակի, 9 Յունիսի կէսօրէ վերջ ժամը 4ին, Ժառանգ. վարժարանի մարզադաշտին վրայ, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանի տարեկան դաշտահանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Միաբանութեան անդամներու, օտար կրօնական պետերու ներկայացուցիչներու, ինչպէս նաև ժողովուրդի ստուար բազմութեան։

Մարզահանդէսը սկսաւ երկսեռ մարզիկներու տողանցքով, որուն առջևէն կ'ընթանար վարժարանի նուագախումբը, արքայական քայլերգով։ Ապա, երկու խումբերու բաժնուած աշակերտութիւնը, աւելի քան երկու ժամերու ընթացքին, յաջորդաբար կատարեցին վազքեր, երկար և բարձր ոստում, Շուէտական մարզանք, բուրգեր, դրօշարշաւ և պարանաձգութիւն։ Իսկ վարժարանիս աղջիկ մարզիկները, բաժնուած դարձեալ երկու խումբերու, մասնակցեցան վազքերու, յախտախաղի և Շուէտական մարզանքի։

Հանդէսի աւարտին, յաջող մարզիկները, ինչպէս նաև տարւոյս ընթացքին Ֆութպոլի, Պասքէթպոլի, Վոլիպոլի և փինկ-փոնկի խաղերու մէջ առաջին հանդիսացողները ստացան բաժակներ ու մէտալներ՝ Ամեն. Պատրիարք Սրբազանէն։

digitised by A.R.A.R.@